Արձանագրություն N 13
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումների գնման «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «_30_» «_հունվարի_» 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Նելսոն Զուլոյան
Հանձնաժողովի անդամներ	Ալբերտ Մուրադյան,
	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. **ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.**

(Ն.Զուլոյան)

1.1 ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված՝ հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը անցկացվել է 2018 թվականի հունվարի 30-ին, ժամը 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

2. **ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին.**

(Ն.Զուլոյան)

2.1 ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ուղարկվել են պահանջվող էլեկտրոնային հասցեով:

3. **ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրած մասնակցի անվանումը և հասցեն**

(Ն.Զուլոյան)

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի գծով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի անվանումը	Հասցե
1	«Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայլ Բիրդ Դիստրիբյուշն» ՖԶԵ համատեղ գործունեություն	Ք.Երևան, Արին Բերդի 7 Միացյալ Արաբական Էմիրություններ, Դուբայ,RA08 VB07
2	«Էլմարկետ» ՍՊԸ	Ք.Երևան, Աճառյան 33/4
3	«Լանս» ՍՊԸ	Ք.Երևան, Կոմիտաս 49
4	«Նորմա Պլյուս» ՍՊԸ	Ք.Երևան, Մաշտոցի 2, տարածք 60

4. ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ

(Ն.Զուլոյան)

4.1 ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով մրցույթի 2-րդ փուլի փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2018թ-ի հունվարի 23-ը: Սահմանված վերջնաժամկետի դրությամբ բոլոր մասնակիցների կողմից ստացվել են պահանջվող փաստաթղթերը:

4.2 Փաստաթղթերի նախնական դիտարկման արդյունքում արձանագրվել է, որ 4-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր «Նորմա-սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ որպես հրավերով պահանջվող սերվիս կենտրոնի հետ կնքված պայմանագիր, սակայն պայմանագրում հստակ չէր երևում, որ «Նորմա-սերվիս» ՍՊԸ-ն հանդիսանում է մասնակցի կողմից առաջարկվող նույնականացման քարտ ընթերցող սարքի արտադրողի՝ Amaxtek Electronics Limited ընկերության հավաստագրված սերվիս կենտրոնը ՀՀ-ում:

4.3 «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից հավելված 6.1-ում արտադրողի անվանումը այնուամենայնիվ սխալմամբ նշվել էր արտադրության երկիրը, ինչպես նաև չէին ներկայացվել նմանատիպ պայմանագրին կից կնքված համաձայնագիրը և հաշիվ ապրանքագրի պատճենները:

4.4 «Լանս» ՍՊԸ-ի և Յունիվերսալ Փրոջեքթ ՍՊԸ և Ֆայր Դիստրիբյուշն ՖԶԵ համատեղ գործունեության ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

4.5 «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն մասնակիցները էլեկտրոնային եղանակով ծանուցվել են 1 աշխատանքային օրվա ընթացքում բացակայող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է արտադրողի սերտիֆիկատը՝ ի հավաստումն առ այն, որ «Նորմա-սերվիս» ՍՊԸ-ն հանդիսանում է Amaxtek Electronics Limited ընկերության հավաստագրված սերվիս կենտրոնը ՀՀ-ում: «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են համաձայնագրի և հաշիվ ապրանքագրի պատճենները և շտկված հավելված 6.1-ը:

4.6 ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից սահմանված կարգով ներկայացվել են նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի հավելված 6.1-ի:Մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ն.Զուլոյան)

5.1 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից հունվարի 17-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ներկայացվել է «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը: Եզրակացությունը ստացվել է հունվարի 22-ին. մասնակիցների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը վկայում է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող բոլոր մասնակիցները բավարարում են հրավերի՝ ֆինանսական միջոցների չափանիշով սահմանված պահանջներին:

6. Հանձնաժողովը որոշեց՝

(Ն.Զուլոյան)

6.1 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայլ Բիրդ Դիստրիբյուշն» ՓՁԵ համատեղ գործունեության կարգով հայտ ներկայացրած մասնակցին, 2-րդ չափաբաժնով՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնով՝ «Լանս» ՍՊԸ-ին, 4-րդ չափաբաժնով՝ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:
6.2 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին ծանուցել անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
6.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Զուլոյան)

7.1 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքմանը

հաջորդող օրը, ժամը՝ 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նելսոն Զուլոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ալբերտ Մուրադյան

_____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան